ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՏԱՇԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության «**Տաշիրի բժշկական կենտրոն**» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի N 2 որոշումը և արձանագրությունը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԱՍՐՅԱՆ

«__16__» __ փետրվարի__ 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՏԱՇԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 2
16 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.
Ք. ՎԱՆԱՁՈՐ
ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի թիվ 129-Ն որոշման հավելված N 1-ի 87-րդ կետով.

ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության «Տաշիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2023 թվականի փետրվարի 16-ին ՀՀ Լոռու մարզպետարանում /ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ N 1/ անցկացվել է **մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվում քաղաքացի՝**

Հ/Հ	Հաղթող ճանաչված մասնակիցների ազգանունը, անունը, հայրանունը,	Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և անձնագրային տվյալները.	Թեստավորման փուլում մասնակցի հավաքած միավորների քանակը (տոկոսը)	Հարցազրույցի փուլում մասնակցի գնահատման ընդհանուր արդյունքը (տոկոսը)
1.	**Վահե Ջիվանի Անախասյան**	28.03.1971թ., ՆՔ 013328356, տրվ. 05.08.2022թ. 039 կողմից	**50 (100 %)**	**107 (99,1 %)**

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ (ստորագրություն) Գ. ԱՍՐՅԱՆ (անունը, ազգանունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ (ստորագրություն) Հ. ՄԿՐՏՉՅԱՆ (անունը, ազգանունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ (ստորագրություն) Ռ. ՊՈՂՈՍՅԱՆ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրություն) Ա. ԱԼՈՅԱՆ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրություն) Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրություն) Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրություն) Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (անունը, ազգանունը)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության «**Տաշիրի բժշկական կենտրոն**» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար կազմակերպված մրցութային հանձնաժողովը թեստավորման աշխատանքն ստուգեց թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշի միջոցով: Հանձնաժողովի անդամները համատեղ, ձևանմուշի միջոցով, մեկ առ մեկ ստուգեցին մասնակցի կողմից ամփոփաթերթերում նշված պատասխանները: Մասնակցի համար հաշվարկվեց հավաքված միավորների քանակը և տոկոսը:

Ստուգման աշխատանքներն ավարտվելուց հետո մասնակիցը հրավիրվեց թեստավորման սենյակ: Հանձնաժողովի նախագահի կողմից մաքրվեց ամփոփաթերթի հիմնական մասի ծածկաշերտը: Հետո բարձրաձայն հայտարարվեց ամփոփաթերթի համարը և դրա վրա նշված տոկոսային հարաբերակցությունը: Հանձնաժողովի նախագահը բարձրաձայն ընթերցեց ամփոփաթերթի կտրոնի վրա նշված ազգանունը, անունը, հայրանունը: Մասնակիցը ներկայացրեց իր անձը հաստատող փաստաթուղթը, ստացավ իր կտրոնը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ մաքրեց ծածկաշերտը և բարձրաձայն հայտնեց իր կտրոնի համարը: Դրանից հետո հանձնաժողովի նախագահը հայտարարեց մասնակցի հավաքած միավորը (տոկոսը): Մասնակցի հավաքած միավորը (տոկոսը) հայտարարելուց անմիջապես հետո հանձնաժողովը հրապարակեց թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշը:

Արձանագրվեց՝

Միավոր	Տոկոս	Ամփոփաթերթի հիմնական մասի համար	Ամփոփաթերթի կտրոնի մասի համար	Մասնակցի անուն ազգանուն հայրանուն
50	**100**	**1483**	**1483**	**Վահե Ջիվանի Անախասյան**

Հանձնաժողովը հրապարակեց մրցույթի հաջորդ՝ հարցազրույցի փուլ անցած մասնակցի անունը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԱՍՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

«__16__» __ փետրվարի__ 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2023թ. թիվ 71-Ա

ՎԱՀԵ ՋԻՎԱՆԻ ԱՆԱԽԱՍՅԱՆԻՆ «ՏԱՇԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 85-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 16-ի թիվ 2 որոշումը և հաշվի առնելով Վ.Անախասյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Վահե Ջիվանի Անախասյանին նշանակել «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով 2023 թվականի փետրվարի 20-ից:

2. Վ.Անախասյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

16/02/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. փետրվարի 16
ք.Վանաձոր